



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

36

Qpnygukp

unlung u.



Pahpiku

1892.

390

8-93
2-99

№ 3 Հրատ. անգր-Աւելո-ի № 3

ՊՐՈՎՅՈՒՅՑ

ՏԵՏՐ

ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ

Ազատուններն Ե'լ մեղք են,
Կոյր երաժիշտը,
Երազ,
Ճշմարտախօս աշակերտ,
Եղբայրասէրը.

ՓԵՖԼԻՍ
Ման Մ. Գ. Ռուբենեանցի
. Բուլվար Պուշկինի
. Քումանցա, և Գօլ պր., ձ. № 41.
1892

85
2-90

6132

Հուն 1922 թվականի բարեգործական գիրք
8-15. 6066. Հայոց պատմութեան
9-90 № 3 Հրատ. Ասկ-Աւելի № 3

18 ¹⁵ XII 92
Ա Ր Ո Յ Ց Ե Բ Ր
Թիֆլիս
Տեր-Միութիւն

ՏԵՍՐ Ա.

1
2
0
8
1

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Անասուններն եւ մեղք են:
Կոյր երաժիշտը,
Երազ,
Ճշմարտախօս աշակերտը,
Եղբայրասէրը,



Տպարան Մ. Գ. Ռոտինանցի
Տիպոգր. Մ. Դ. Ռոտինանցի, Կոմիտասի պող. 41.
1892

Дозволено ценз. Тифлисъ, 8 Декабря 1892 г.

ԱՆԱՍՈՒՆՆԵՐՆ ԷԼ ՄԵՂԲ ԵՆ



յս մի փոքրիկ գրուածքը, սիրելի
ընթերցողներ, որ առաջարկում եմ ձեզ կար-
դալու, մի կարճ հետաքրքրական նիւթ է այն
բանի մասին, թէ ինչպէս մեղանից ամեն մէկը
պարտական է վերաբերութիւն գէպի անխօս անա-
սունները և արդեօք այնպէս է պէտք, որպէս
մենք ենք վարուել մինչև այժմ:

Զէ կարելի չխոսառվանուիլ, որ մեր ան-
խղճութեան շնորհիւ շատ են տանջւում անա-
սունները: Վերցնենք հենց լծկան տաւարը—
եզր, գոմէշը, ձին ու մի քիչ հաշուի տակ
դնելով մեր արածները՝ կըտեսնենք թէ որքան
անխիղճ ենք վարւում նրանց հետ: Գիւղացիք
և սայլապանները երբեմն այնքան են բառ-
նում աայլերը, որ խեղճ անքան անասունները
տնքում են ու անքում, կուշտ ծեծ ուտում,
չոքում՝ բառանջում: Այդ անօրէն վարմունքը
աւելի սարսափելի է լինում՝ անձրե ու ձիւն
եկած ժամանակ, անտանելի ցեխի ու բարձրա-
ցած ջրի (սէլաֆ) սպառմառով: Ողորմելի անա-

սունների հոգին դուրս է դալիս քաշելով իրենց
ուժերից վեր ահագին ծանրութիւնը։ Նաև
անդամ վայր են ընկնում, ազիողորմ կերպով
բառանցում, իսկ նրանց անսիրտ տէրերը անա-
մօթաբար ծեծում ու ջարդում են խեղճերին։

Նաև անդամ էլ տեսնում ենք, որ նրանց
տէրերը կուշա ու կուռ ուտառում են, քէֆ են
անում, իսկ նրանց սոված թողնում։ Նաև
անդամ էլ տեսնում ենք, որ յաւոտած, հի-
ւանդացած եզներին ու ձիերին բանեցնում են,
որոնց ոտներից ու մէջքերից արիւնը շուսում
է։ Գնացէք, մտիկ արեցէք այն տեղերը, որ-
տեղ մորթում են առհասարակ մասցուները և
կ'տեսնէք թէ ինչ տեսակ քարասրտութեամբ
են վարում մարդիկ նրանց հետ։

Նրանք ոչ թէ միայն չարչարում, տանջ-
ուում են հասակաւոր մարդկանցից, այլ և շատ
անդամ փոքրիկ երեխաներից։ Նատերի համար
մեծ զուարճութիւն է չարչարել, տանջել շնիկ-
ներին, կատուներին, ծեծել նրանց ճիպոտնե-
րով, փայտով, քանդել թռչունների բոյնը,
կամ այնտեղից հանել ձուաները, ձագերը։
Երկնքի անմեղ թռչունները նաև քիչ չեն
տանջում որսորդներից, որոնք ոչ միայն հրա-
ցանի գնդակից են սպանուում, այլ վիրաւո-
րուած տեղները այնպէս ծեծ են ուտում, որ

Սատուած խնայէ. նրանց իրարից բաժանում
են, ձագին մօրից ջոկում, սոված, ծարաւ
սատկացնում։

Նաև օրինակներ կարելի է բերել մարդ-
կանց անօրէն վարմունքներից կղէպի անլեզու
կենդանիները, բայց ցոյց տուածներս էլ բա-
ւական են ձեզ համար, ընթերցողներ ու փոք-
րիկ մանուկներ, Եւ իզուր տեղը չէ, որ խե-
լացի, ուսումնական և բարի մարդիկ հիմնել
են մեծամեծ քաղաքներում անասունների
խնամատարութեան համար ընկերութիւն, որի
նպատակն է՝ չ'թոյլ տալ տանջել անասուննե-
րին և պատժել այն մարդկանց, որոնք չար-
չարում են անասուններին։

Այժմ ցոյց տամ ձեզ, թէ ինչ վատ ու
վասակար հետեւանք ունի այդ բանը հէնց
մարդկանց համար, որոնք այդպէս տմարդորէն
են վարում անասունների հետ։

Գիւղացին և կամ սայլապանը, որ օդ-
տուելու համար շատ ծանր են բարձում սայ-
լերը, ընդհակառակը, չեն շահուում, որովհետեւ
չոքէ-չոք գնացիսն լծկանը ուժից ընկնում է
և սատկում։ Ացդիսով մարդիկ մի չնչին օգտի
համար զրկում են իրենց հաւատարիմ աշխա-
տողներից։ չար մարդը միշտ պատժեում է։

Մարդկանց այդ անիրաւացի վարմունքին

կարելի է տալ երախտամոռ, անխիղճ, անկրօն,
անաստուած անունը, քանի որ նրանք՝ անա-
սունները շատ են օգնում մարդկանց, — կերա-
կուր տալիս, ջուր, վառելիք բերում, դեղնը
և հագնելիք տալիս, իսկ մենք, լնդհակառը,
դրանց փոխարէն անգթութեամբ ենք վարւում:
Աչ, սիրելի ընթերցողներ, նամանաւանդ դմւք,
մանուկներ, պէտք է բարի, շատ բարի լինէք
դէպի նրանց, որովհետև նրանք անխօս են և,
բացի մի քանիսից, անպաշտպան և հլու
հպատակ:

Սիրող ու զգայուն սիրող չի կարող ան-
տարբեր լինել դէպի անասունները: Նայեցէք
դուք գիւղացիներին, որոնք անողորմ կերպով
են վերաբերում դէպի իրենց որդիքը, կտես-
նէք, որ այդ առաջացել է նրանից, որ նա
փոքրուց անխղճօրէն է վերաբերուել դէպի
անասունները և շարունակ ծեծել, ջարդել:

Եւ իգուր տեղը չէ խրասում սուրբ գիրքը.
«Երանի այն մարդուն, որը ողորմած է դէպի
անասունները: Դեռ շատ հին ժամանակ էլ
կար օրէնք մարդկանց համար, որ լինեն գթա-
սիրո դէպի այդ անլեզու անասունները:
Գրուած է «Եթէ ճանապարհին տեսնես
թռչունների բոյն ծառերի և կամ հողի վրայ,
ձագերով կամ ձուաններով, կամ եթէ մայրը

թռւիս է նստած՝ մի վերցնիլ: Երբ կտեսնես
քո եղբոր մոլորուած եղը, կամ ոչխարը, մի
թռջնիր որ կորչեն, այլ քշիր, բեր եղբորդ
տունը: Եւ այդ բարի վարմունքի համար ի՞նչ
է խստանում Աստուած մարդկանց, այն, ինչ
որ երախտագէտ որդուն. «Պատուիր հօրդ ու
մօրդ, որպէսպի երկար կեանք ունենաս:
Օրէնքը նոյնակս արգելում է հաւասարապէս,
թէ մարդկանց և թէ անասունների սպանու-
թիւնը: Արարիչն ինքն հրաշալի կերպով ցոյց
է տալիս մեզ, որ չպէտք է անողորմ լինել
դէպի անասունները: Սուրբ գիրքը զրում է,
որ մի անզամ Բահաղամ մարդարէն նստած
աւանակի վրայ՝ գնում էր: Ասոծուն հաճելի
չէր նրա ճանապարհորդութիւնը և ուղարկեց
հրեշտակին, որ արգելէ նրա ճանապարհը:
Մարդարէն սկզբում չտեսաւ հրեշտակին, որը
կանգնած էր ճանապարհի վրայ: Աւանակը
վայր ընկաւ հրեշտակի առաջ: Մարդարէն հէնց
այնէր, որ պէտք է ծեծէր, աւանակը ասեց
մարդու ձայնով. «Ի՞նչո՞ւ համար ես դու ի՞նձ
ծեծում, ի՞նչ եմ արելը: Տեսնելով հրեշտակին՝
աշաշեց մարդարէն: Եւ ահա, սիրելի մանուկ-
ներ, այդ ձեզ օրինակ, թէ ի՞նչպէս պէտք է
վարուել անլեզու անասունների հետ—խղճմը-
տանքով և զիջողաբար, այլ ոչ թէ՝ սրանց

հակառակ։ Անգթութեամբ վարուելը, և՛ մեղք է, և՛ վասակար, նոյն իսկ ձեզ համար։

Եղէք բարի և ողորմած նաև դէպի անքան անասունները։

ԿՈՅՐ ԵՐԱԺԻՇՏԸ



ուսիկի աչքերը ցաւում էին։ Եկաւ բժիշկը, նայեց աչերին և ասաց. «Յուսիկի աչքերի ցաւը շատ վանդաւոր է, բայց եթէ նա չարորէ—կլաւանայ, հակառակ դէպքում— նա կարող է կուրանալ։» Նշանակեց դեղ և գնաց։

Յուսիկը պառկած էր անկողնում, քոր էին գալիս նրա աչերը, չէր համբերում, միշտ տրուրում էր։ Այդպիսով և կուրացաւ Յուսիկը։ Նրա աչերի վրայ փառ եկաւ, և նա այլ ևս չէր տեսնում Աստծոյ լոյսը։

Զանձրալի է կոյր լինելը, Ամեն ինչ նրա համար խաւար է, մութն է։ Եւ որպէսզի Յուսիկի համար ձանձրալի չլինէր՝ մացրը սկսեց սովորեցնել նրան երաժշտութիւն։ Յուսիկը մեծացաւ և դարձաւ յացնի երաժիշտ։ Երբոր

ածում էր—բոլորը, ովքեր լսում էին, լալիս էին ու լալիս նրա գեղեցիկ ածելուց։

Յուսիկն ինքն էլ էր լալիս, ածում էր և լալիս—լալիս էր, որ չի կարող տհմնել Աստծոյ աշխարհը և չի տեսնիլ ոչ մի ժամանակ։

Սիրում էր բոլորին և ոչ ոքի չէր տեսնում։ Եւ այս պատճառով էլ նրա նուազածութիւնը լինում էր տիտոր, շատ տիտոր։

Ե Բ Ա Զ



Եսաւ Աստղիկը «Կոյր երաժշտին» և ծիծաղեց նրա վրայ։

Սիրուն Աստղիկը հայրիկին ու մացրիկին հանգիստ քուն մախթեց և գնաց քնելու։ Դայեակը հանեց նրա շորերը, պառկեցրեց և նա քայլցր քնեց։

Նա տեսաւ շատ երազներ—տեսաւ որ դասը լաւ պատասխանեց, իսկ ուսուցչուհին գովարանելով՝ հինգ նշանակեց։ Տեսաւ որ մացրիկը նրա համար կարում էր գեղեցիկ, կապոյտ շերթերով գերիայ։ Աստղիկը ուրախ էր զրա վերայ և ժպառում էր երազում։ Տեսաւ նոյնպէս, որ իբենց պարտիզի աւազանի մօտ աճած ուռենու ծառի վրայից կախուած էին

տանձեր, որի վրայ զարմանում էր նա և ուրախանում, և վազվելով ծառի շուրջը՝ ցանկանում էր պոկել ալենալաւ տանձը։ Պոկեց, կերաւ ու կծեց լեզուն, լեզուից արիւն հոսեց, հետզհետէ արիւնը շատացաւ, այն ժամանակ վախեցաւ, ու սկսեց արտասուել, նրա ձայնին վրայ եկաւ մայրը, տեսաւ արիւնը և ասում է. — «Ախ, բժիշկ, շնուռ, հարկաւոր է բժիշկ բերելու։ Եկաւ բժիշկը։ Զարհուրելի էր բժիշկը — բարձրահասակ, դեմքը չեցու ու լիքը, իսկ իրանը պարարտ, մազերը խճճուած, ձայնը խրոխա ու կոպիտ, իսկ քթի վրայ մեծ ակնոցներ առանց ապակու, իսկ ձեռներում երկար-երկար մլրատներ և այնքան էլ երկար բիզ։ Նայեց բժիշկը Աստղիկին և ասաց. — «Հարկաւոր, է նրա լեզուն կորել, որովհետեւ էլ ոչ մի բանի պէտք չէ»։

Մայրը գեռ ոչինչ չասաց բժշկին՝ բժիշկը դուրս հանեց Աստղիկի լեզուն ու կտրեց։ Լալիս էր Աստղիկը, սեղմելով ձեռիկները աչերին։ Հօսում էր արցունքը, իսկ բժիշկը ասում. — «Մի տրորիր աչերդ, եթէ ոչ կ'կուրանաս», — ահռելի, սոսկալի էր բժշկի ձայնը։

Եւ զգում էր փոքրիկ Աստղիկը, որ կուրացել է։

Ծիծաղեց այն ժամանակ բժիշկը և ասաց. — «Դու այժմ նման ես Յուսիկին, իսկ

շուտով էլ կ'նմանուես մի խուլ երեխայի և պատուց նրա ականջի թմբկաթաղանթը»։

Եւ Աստղիկը խլացաւ։ Լալիս էր բարձրաձայն, իսկ թէ ուրէ մայրը, թէ ի՞նչ պատահեց իրեն — ոչինչ չգիտէ, որովհետեւ չի տեսնում, չի լսում, և ոչինչ չի կարող ասել։

— «Ճմմ... ճմմ... ճմմ...» բոլոր ուժով աշխատում էր Աստղիկը աղաղակել, բայց լուռ էր...։

— «Աստղիկս, աղաւնիկս, — լսեց մօր ձայնը Աստղիկը։ Լսեց և զարմացաւ, բայցաւ աչերը և տեսաւ, որ մայրը կանգնած է իր գլխավերելը, զարթեցնում է և գուրգուրում իր քաղցր Աստղիկին։

— «Մայրիկ, մայրիկ», — աղաղակում էր Աստղիկը. — Մայրիկ, ես տհամ զարհուրելի, զարհուրելի երազ։

— «Խեղճ գառնուկս, գրա համար էլ աչգուկս խորը հառաչում էիր երազիդ մէջ» — ասաց մայրը և համբուրեց, իսկ Աստղիկը վախեցած գրկեց մօրը, համբուրեց և լացեց։

Ահա, ացգպէս սաստիկ վախեցրեց այդ երազը նրան, իբրև պատիժ ուրիշին ծաղ-ըելու։



ՃԵՄԱՐՏԱԽՈՍ ԱՇԱՎԵՐԸ



Վ է այդպիս չարութիւն անում—
հարցրեց ծխական ուսումնարանի ուսուցիչը,
ներս մտնելով դասարանն Նրա հարցին պատաս-
խան եղաւ խորին լռութիւնը: Յիսունից աւելի
աշակերտներ, որոնց թւում էին և մեզաւոր-
ները, լուս նայում էին ուսուցչի երեսին, և
չէր պատասխանում և ոչ մեկը նրա հարցին:

—Գուք, չար տղանե՞ր,—կրկին հարցրեց
ուսուցիչը, բայց այժմ աւելի մեզմ ձայնով.

—Ո՞վ է մեզաւոր այդ անկարգութեան մէջ:
Այս անգամ էլ ոչ ոք չպատասխանեց
հարցին:

Ուսուցիչը հինգ քոպէից աւելի կանգնեց
լուս ու մունջ՝ սպասելով պատասխանին, և
յետոյ գնաց կից սենեակը՝ պարապիլու: Բայց
ոտքը դուրս չդրած՝ կրկնուեց միենոյն չարու-
թիւնը աւելի բարձր ձայներով ու աղմուկ-
ներով:

—Թող բարձրացնեն մասները նրանք,
ովքեր մեզաւոր են, —ասաց ուսուցիչը: Ասկայն
ոչ մի ձեռք չբարձրացաւ:

—Թող այժմ բարձրացնեն բոլոր անմեղ-
ները: Ամենքն էլ խորյն բարձրացրին ձեռ-
ները: Մի քանի քոպէ ուսուցիչը նայեց նրանց
երեսին, դառն և զժգոն զէմքով: Վերջապէս
ասաց ուսուցիչը: —Երբ ես գեռ մանուկ էի՝
նայում էի ստախօսի վրայ, որպէս ամենա-
զլզուելի յանցաւորի: Ես ինձ շատ վիրաւո-
րուած եմ զգում, որ ի՞մ աշակերտները շատ
հեռու չեն զնացել այդպիսաի ստախօս, յածրա-
հոգի երեխաներից: Թէև չարութիւն անելը
շատ վատ բան է, բայց էլի հազար անգամ
լաւ է ստախօսութիւնից: Ստախօսութիւնը
մեծ մեղք է: Էլի մի անգամ կամենում եմ ձեզ
փորձել, թող մեզաւորները մատ բարձրացնեն:
Ասկայն և ոչ մեկը չբարձրացրեց:

—Բոլոր աշխարհի հարստութեան հա-
մար, —ասաց ուսուցիչը: —Ես չէի ցանկանալ
լինել այն երեխան, որը բարձրացնում է իր
բոլոր ընկերների ներկայութեամբ իր ձեռքը,
որպէսզի պնդէ իր ստախօսութիւնը: —Եւ
նա դարձեալ դուրս գնաց:

—Գիտես, այս չարութիւնը դու արեցիր,
Ալէքսան, ասաց նրա ընկերներից մեկը անլսելի
ձայնով, և զգուանքով նայեց նրա վրայ:

—Ի՞նչ մեծ բան է, եթէ ես արած լի-
նեի, —ասաց հեգնութեամբ Ալէքսանը:

— Բայց ես չեմ կարող քեզ չմեղաղը ել,
եթէ քո փոխարէն մի ուրիշն պատճէին:

— Ուրեմն՝ դու ուզում ես ինձ մատնել,
մատնիր, տեսնենք:

— Ինչ մատնել, ինչ բան, ես կկատարեմ
իմ պարտքը՝ եթէ դու այնքան քաջութիւն
չես ունենայ, որ խոստվանուիս ճշմարտու-
թիւնը, մեղադրես ինքդ քեզ, այն ժամանակ
ես կասեմ բոլորի ներկայութեամբ, որ դու էիր
մեղաւորը: Հաւասացած եմ, որ այդ իմ անե-
լիքը յանցանք չի կարող համարուիլ:

— 0', ճշմարտախօս, ճշմարտախօս Երուանդ,
ասաց Ալէքսանը այնպիսի բարձր ձայնով, որ
բոլոր ընկերները լսեցին, և միւնոյն ժամանակ
նայեցին նրա երեսին:

— Չես ցանկանում ինձ էլ մատնել, —
ասաց Երուանդի մօտիկ նասողներից մէկը կո-
պիշտ ու սպառնալի ձայնով:

— Մի վախենար առայժմ, — պատասխանեց
Երուանդը, բայց ես կարող եմ քեզ զգուշաց-
նել, որ այդ կանեմ և քո նկատմամբ, այսինքն՝
եթէ դու էլ չարութիւն անես, իսկ յետոյ
ամենի առաջ կանգնես և թագնես քո արածդ,
ես համոզուած եմ, որ ամեն մի ազնիւ երեխայ
ոչ միայն իրաւունք ունի, այլ և ամեն ինչ
անկեղծութեամբ պարագան է ասել ուսուցչին:

— Ով կարող է, տեսնենք, թող հա-
մարձակուի ասել, — գոռազութեամբ վրաբերեց
մէկը: Դասերից յետոյ ընկերները շրջապատե-
ցին Երուանդին և աշխատում էին համոզել
նրան, որ մատնիչ, լրտես լինելը աշխարհիս
երեսին ամենազգուելի բանն է:

— Ես չեմ կարծում, — ասաց Երուանդը, —
որ այդ կիսով չափ վաս լինի նրանից, որ
մարդու խանդարում է դպրոցի կարգ ու կանոնը,
և միւնոյն ժամանակ լինի ստախօս:

— Ինչ կուզես, դու ասմ, միայն մատնիչ
լինելը ամենախայտառակ, ամենաստոր արա-
րածն է աշխարհիս երեսին, — ասաց արհամու-
րանքով Ալէքսանը:

— Ով է մեղանից ճշմարիտը ու ազնիւը,
Արմենակ, նա, որ ճշմարտապէս ասում է ու-
րիշի յանցանքը, կամ նա, որ անխիղմ կերպով
սուս է խօսում, ուրիշներին էլ մեղադրանքի
և կասկածանքի ենթարկում:

— Իրաւունք եմ տալիս հէնց քեզ դատե-
լու, պատասխանեց յանցաւորը զգուելի ժպիտով:

— Ինձ համար դժուարին չէ դատել բո-
լորիդ գործերը, ասաց Երուանդը. — իզուր ենք
խօսում, միայն այս կասեմ քեզ, եթէ դու
վաղը չգնաս մեր ուսուցչի մօտ և չխոսո-
վանուիս գործած յանցանքդ, — ես այն ժամանակ


կասեմամենը, կրկնում եմ, ամեն բան կ'ասեմ; Ես
չեմ ցանկանում կասկածանքի տակ մնալ, սուա-
խօսներին ընկեր լինել, նրանց հետ հաւասա-
րապէս պատժուիլ, չը որ ես մեղաւոր չեմ;
— Ես միշտ կարծում էի, որ դու ամենա-
վեղուս աղաներից մէին ես, ասաց Ալէքսանը,
և այժմ էլ համազուեցայ այդ բանում:

— Նա դրանով, եթէ որ մատնի, կ'ապա-
ցուցանէ, որ ինքն ամենանպիտան, փչացած
տղաներից մէին է մեր ամբողջ դասարանում,
նկատեց յանցաւորներից մէկը:

— Գնանք, ասսց մի ուրիշ աշակերտ, քա-
շելով Երուանդի թերից.— Եթէ ես լինէի քո
տեղը, ոչինչ չէի ասի, գիտես, նրանք ինչպէս
էն սոսում ճշմարտութիւնը և ճշմարտախօսին:

— Մեծ զանազանութիւն կայ, Գէորգ, —
ասաց Երուանդը, ճշմարտախօսի և լրտեսի մէջ,
ինչպէս որ բացատրել է ինձ այդ բանը հայ-
րիկ։ օրինակ՝ սա ինչ լրտեսութիւն է, եթէ
մի աշակերտ յայտնի ուսուցչին ճշմարտութիւ-
նը, որպէսզի միւս անդամ չարութիւն չպա-
տահի։ Ի հարկէ, բոլորովին ուրիշ բան է, եթէ
քէմիս համար ուզենամ, որ ընկերս պատժուի
և ամեն բոլով վազեմ ուսուցչի մօտ և անարդարու-
թեամբ յայտնեմ անմեղների անունը, ի հարկէ,
անշուշտ ես արժանի կը լինեմ այն ժամանակ

«մատնիչ» անունը կրելու, բայց Աստուած մի
արասյէ, թաղ սե լինի այն օրը, եթէ մոքումն
այդպիսի բան դնեմ։ Ալէքսանը ոչ միայն ու-
սումնարանի կանոնադրութեան հակառակ գոր-
ծեց, այլ և խանգարեց ուրիշներին, զրկեց
նրանց ոսկէ բովիներից, ենթարկեց կասկածան-
քի, բոլորին ստախօս կոչումին արժանացրեց։
Այդպէս երկար խօսում էին երկու ըն-
կերները։


Հենց որ Երուանդը եկաւ տուն, իսկոյն
պատմեց հօրը ամեն ինչ ճշմարտութեամբ և
խնդրեց նրանից անկեղծ խորհուրդ։

— Գնէ ասում ես, որ հաստատ վճռել ես
յայտնել ուսուցչիդ մեղաւորի ով լինելը, —
հարցրեց հայրը։

— Այո, հայրիկ ջան, եթէ միայն հաւա-
նութիւն կ'ասա այդ խմ որոշմունքին։

— Անպէս, ինչպէս դու ինձ ասացիր, ար-
ժանի է ասել, սակայն կարող է պատահել, որ
դու սիսալուած լինիս, և այն ժամանակ ար-
ժանի ես չարաչար պատժուելու ընկերներիցդ։

— Ես այդ լաւ գիտեմ, հայրիկ, բայց չէ
որ դու միշտ ասել ես ինձ, որ ամեն բանում
մարդս պարտական է առաջ գնալ այնպէս, ինչ-
պէս որ ճշմարիս խղճմանքն է առաջնորդում։

— Բայց դու հաւասացած ես, որ արդար
ես այդ բանում:

— Այս:

— Դու ուրախ ես, որ ընկերդ պատժուի:

— Բոլորովին ոչ:

— Ապա էլ ինչու ես ձգտում ասել ուսուց-
չիդ մեղաւորի յանցանքը:

— Առաջին՝ ազատել ինձ մեղադրանքից և
ստախօս անունից, իսկ երկրորդ՝ ազատել ըն-
կերներիս այդ միենոյն բանից:

— Եթէ այդպէս է, մի վախենար բամբա-
սանքից, ասաց հայրը, խրախուսելով որդուն.—
Բայց ես միայն խորհուրդ կ'ատաի յայտնել
դրաւոր, թէ ի՞նչը ստիպեց քեզ այդ բանը
անելու և ստորագրէիր անունոյ:

Առաւոտեան, դասի ժամանակ, Երուանդը
տուեց ուսուցչին մի տոմսակ: Կարդաց ուսու-
ցիչը ցածր ձայնով և մի քանի րոպէ մտածե-
լուց յետոյ՝ ասաց.— Տեսնում էք այս տոմսալը,
բոլորի ուշադրութիւնը զարձաւ ուսուցչին,—
սրա բովանդակութիւնը ինձ մեծ ուրախու-
թիւն պատճառեց և ուզում եմ, որ նոյնը
դուք էլ իմանաք, ուրախանաք, լսեցէք. «Աի-
բելի ուսուցիչ, երէկուայ անկարգութեան շնոր-
հիւ շատ արդարներ ես՝ արժանացան Զեր ար-



Դարացի բարկութեամբ նաև տախօս անուան,
որը հաղար անգամ ձանը է տանել, քան չար
ու անկարգ անունը: Ես շատ համոզեցի մեղա-
ւորին, որ խոստվանուի զործած յանցանքը,
վերցնէ ընկերների վրայից Զեր մեղադրանքը,
բայց նա չհամաձանուեց: Կ'յուսամ, որ ինձ
չէք համարի լրտես կամ մատնիչ, քանի որ
ես այդ արեցի իմ խղձիս համաձայնութեամբ,
չուզենալով կրել շատերի նման ստախօս, խա-
բեբայ անունը: Մեղաւորը Ալէքսան Մնացա-
կանեանն է: Խնդրեմ, սիրելի ուսուցիչ, բոլորի
ներկայութեամբ կարգաք տոմսակս: Ե. Սլիկեան:

— Երկուսդ էլ դուրս եկէք գրասեղանի
մօտ: Ալէքսան, դու էի՞ր անկարգութեան
պատճառը:

— Այս, պարոն ուսուցիչ:

— Բայց ինչու էիր...

— Պարոն ուսուցիչ, Վահանն էլ էր, Ոու-
բէնն էլ Արշակն էլ, մէնակ ես չի, շտապով
վրաբերեց Ալէքսանը:

— Բոլորդ էլ դուրս եկէք: Դուք այժմ
տեսնում էք, ասաց ուսուցիչը չորս յանցաւոր-
ներին, որոնք ամօթից կարմրած, գլուխները
չարշ ձգած՝ կանգնել էին փայտացած, դուք
էլ տեսնում էք, դիմեց բոլորին, թէ որքան
մեծ զանազանութիւն կայ աղնիւ աշակերտի

մէջ, որը կատարում է իր սուրբ պարագը,
պարզելով ճշմարտութիւնը և այն աշակերտի
մէջ, որին դուք անուանում էք լրտես, մատ-
նիչ։ Հէնց որ յայտնուեց, որ Ալէքսանը մեղա-
ւոր է, իսկոյն մատնեց ընկերներին, յոյս ու-
նենալով, որ նրանք էլ կպատժուեն և իր
սիրան էլ կհովանայ։ Այժմ, թող այն աշա-
կերտները, որոնք Երուանդին մեղաւոր են ճա-
նաչում—մատ բարձրացնեն։

Ոչ մի ձեռք չ'բարձրացաւ։

—Այժմ, ովքեր արդարացի են գտնում
նրա արածը, թող մատ բարձրացնեն։

Բոլորն էլ բարձրացրին։

Դասը վերջացաւ. անմեղ աշակերտները
ուրախ-զուարթ տուն գնացին, իսկ մեղաւոր-
ները մնացին իրենց արժանի պատիժը ստա-
նալու։

Կրկնապատիկ պատժուեցաւ Ալէքսանը
թէ մատնիչութեան և թէ չարութեան համար։



ԵՂԲԱՅՐԱՍԵՐԸ



ԵՐ սաստիկ շոք էր։
Ն. գիւղ տանող փոստացին ճանապարհով,
որը ընկած էր խիտ անտառի միջով, սլանում
էր սուրհանդակը, բարձրացնելով թանձր փոշի։
Զիաները յոգնել էին, այդ երեսում էր
նրանից, որ զանգակները վատ էին զողանջում,
իսկ կառապանը կարել էր իր ձանձրալի երգը։
Նոքից ու փոշուց նեղացած ճանապարհորդ
սկարոնը հրամացեց կառապանին կանգնեցնել
կառքը և ինքն ցած իջաւ, պատուիրելով որ՝
իրեն ապասէ անտառի վերջում։ Ոտքով ճանա-
պարհ ընկաւ, անցաւ ստուերախիտ ծառերի
տակով և վերջապէս հասաւ մի մեծ ձորի, ուր
լիքն էին պաղատու ծառեր—խնձորենի, տան-
ձենի, շլորենի և խողակաղնի։ Այնուղ արա-
ծում էր ոչխարի հոտը և ոչ մի տէր—տիրա-
կան չիր երեսում։

Ճանապարհորդը հէնց էն էր՝ ուղում էր
գուրս զալ ձորից, մէկ էլ տեսաւ ծառի տակին
նստած երկու փոքրիկ երեխայ։ «Երկի չօբան-

Ներ ենց մտածեց պարոնը: Երեխաները նստած էին իրար մօտ՝ կողք-կողքի տուած: —Մեծը կլինէր հչ աւել, քան տասն և երկու տարեկան: Նրա ծնկների վրայ դրած էր մի զիբք, որ կարդում էր բարձրաճայն, իսկ միւսը, որ մի քանի տարով փոքր էր նրանից՝ լսում էր: Նա լսում էր մեծ ուշադրութեամբ, գլուխը դրած մեծի ուսերի վրայ: Ճանապարհորդը զարմացաւ: Սօտեցաւ երեխաներին, իսկ նրանք նկատեցին այն ժամանակ, երբ խօսաց նրանց հետ:

Այդ բնէ էք կարդում, հարցրեց նրանց ճանապարհորդ պարոնը:

Երեխաները իսկոյն վեր թուան նստած տեղերից, գլուխ տուեցին, իսկ մեծը մեկնեց իր կարգացած զիբքը նրան:

Պարոնը սիրով նայեց փոքրիկ ընթերցաւէրների վրայ և էլի ուզում էր բաներ հարցնել, մէկ էլ նրան շփոթեց միւս երեխացի փոքրիկ դէմքը:

—Այդ բնէ բան է պատահել նրա հետ, մասնացոյց անելով նրա մեծ, կապտացած աչքերի վրայ, որը անշարժ ցածր էր նայում, — ասաց պարոնը:

—Նա կոյր է, գառնութեամբ պատասխանեց մեծը:

—Վաղուցէ:

—Նատ վաղուց է, իսկապէս չեմ ցիշում, թէ երբ պատահեց այդ դժբաղութիւնը:

—Ուրեմն՝ զու դրան հետդ ման ես ածում և կարդացածդ էլ հասկացնում, այն, այդ շատ լաւ բան է, ասաց երիտասարդ ճանապարհորդը, իսկ զու մրտեղից սովորեցիր կարգալ:

—Մեր գիւղական ուսուցչի մօտ: Նա մեզ համար բարի հայր է, և ոչ թէ վարժապետ Երեկոյեանները, երբ վերադառնում եմ տուն՝ գնում եմ նրա մօտ կարդալ — գրել սովորելու. իսկ այս գիւղն էլ մի քանի օրէ, ինչ նուիրելէ ինձ:

—Դուք եղբայրներ էք, բնէ է ձեր անունը:

—Այն, մենք եղբայրներ ենք, իմ անունը Կարապետ է, իսկ փոքր եղօրս՝ Գրիգոր:

—Դէ, կարդա, տեսնեմ, սիրելի կարապետ, ասաց անծանօթ պարոնը և նա ինքն բանալով գիւղը՝ տուեց երեխացին:

Կարապետը կարդաց պարզ և զգացուն ձայնով, երկում էր, որ շատ լաւ էր հասկանում կարդացածը: Նա կարդում էր Յովե երանելու պատմութիւնը, նրա կրած թշուառութիւններն ու տանջանքներն: Աշկարայ երեկում էր, որ այս պատմութիւնը շատ խորը կերպով ազդում էր երկու եղբայրների վրայ: — Հ որ նրանք էլ ունին իրենց վիշտը, ցաւն

ու հոգսը, բայց Յովելի պէս համբերութեամբ
տանում էին ու դիմանում:

Ապրիս, ասաց պարոնը, և ձեռները
դրեց նրանց զլսի վերաց, յետոյ հանեց գրապա-
նից գրամներ ու բաշխեց նրանց ասելով.—
ահա ձեզ փող՝ նոր զիբք գնելու: Երեխաները
էլ չիմացան, թէ ինչո՞ւ յայանեն իրենց շնոր-
հակալութիւնը:

Պարոնը մնաս բարով արեց երեխաներին
և շարունակեց ձանապարհը: Կառքը հասաւ
իջեանը, երիտասարդ պարոնը շատ էր շաս-
պում, որ թէզ լծեն ձիաները, որպէսզի գի-
շերով չը համնի գաւառական քաղաքը: Սակայն
նրան չէր վիճակուած այդպէս շուտ համնել.
իջեանի կառավարիչը հաւատացրեց, որ բոլոր
ձիաները զուրս են զնացած և անկարելի է
այժմ ձանապարհել:

Պարոնը շատ զշտացաւ, բայց ճարն ինչ:
նոր էր մութը կրխել և հէնց ձանապար-
հորդը նոր էր սկսում թէյ խմել—ներս մտա-
սպասաւորը և ասաց, որ գիւղական ուսուցիչ
պ. Վաշեանը ձեզ է հարցնում: Երիտասարդ
պարոնը զարմացաւ՝ թէ ինչ զործ կարող է ու-
նենալ իրեն հետ մի գիւղական ուսուցիչ և հրա-
մացեց ներս հրաւիրել: Ուսուցիչը ներս մտնելով
յանձնեց նրան մի թղթէ դրամներով կապոց:

—Փոքրիկ հովիւները հէնց էն էր, որ
եկան և բերին այս,—ասաց նա, —նրանք պատ-
մեցին ինձ ձեր բարերարութիւնը և խնդրե-
ցին իմանալ, թէ չէ գնացել արդեօք այն
պարոնը, որը նրանց փող բաշխեց. այժմ շատ
ուրախ եմ, որ տեսնուեցանք: Երեկի այս կապո-
ցով փողը ձերն է, որ նրանք գտել են ձանա-
պարհին, ասացիք լանգրեմ, յարգելի պարոն:

Ճանապարհորդը շատ զգացուեց այդպիսի
աղնիւ վարմունքի համար: Նա ասաց, որ այդ
ինքն նկատեց այն ժամանակ, երբ ուզեցաւ
կառապանին մի քանի կոսէկ բաշխել, և հա-
մոզուեցաւ, որ երեխ առաջին իջեանումն է
կորուցել, ու չէր էլ մտածում, որ էլի կը գտնի
կորուսար:

—Իսկ որքան կուրախանան իմ աշակերտ-
ներս, որ ես գտայ ձեզ, ասաց ուսուցիչը.—
նրանք շատ էին վախենում, որ մի գուցէ գնա-
ցած լինէիք:

—Այն, գնացած կլինէի, եթէ ձիաներ
լինէին, բայց որովհետեւ չկան՝ ես պարտա-
ւորուած պէտք է մնամ՝ մինչև առաւոտ և գի-
շերել այսուղ:

Նրանք երկար խօսացին: Ուսուցիչը իմա-
ցաւ, որ իր նոր ծանօթը գաւառի նշանա-
կուած բժիշկն է: Յոդնած, տանջուած երկար

ճանապարհորդութիւնից՝ նա դեռ ևս ուզում էր, որ գիշերն էլ ճանապարհորդ է, և որքան վիրաւորվեց, որ չ'աջողութեց գնալ: Ուսուցիչը ՚ի նկատի առնելով, որ բժշկին անյարմար է այնտեղ գիշերելլ՝ հրաւիրեց իրենց մօտ: Բժիշկը շնորհակալ եղաւ և ուրախութեամբ ընդունեց ուսուցչի առաջարկութիւնը: Նրա բարեսիրտ, անարար և համեստ կինը ուրախացաւ թանգարին հիւրի գալով. նա արդէն լսել էր երեխաներից ազնուասիրոց բժշկի մասին, և չ'գիտէր թէ ինչպէս հիւրասիր էր նրան:

Բժիշկը խմելով թէյլ՝ անմիջապէս խնդրեց կանչել փոքրիկներին, բայց նրանք արդէն քնած էին: Նա շաա հարց ու փորձ արեց հովիւ—աշակերաների վերաբերմամբ, պատմեց թէ ինչպէս զուր եկան նրանք իրեն և թողին այնքան լաւ տպաւորութիւն, որ ոչ մի ժամանակ չի մոռանայ. — զովեց մեծ եղբօր վարմունքը՝ դէպի փոքր եղբայրը, պատմեց և այն՝ թէ ինչպէս նրանք յարգում ու սիրում են իրենց ուսուցչին:

Այս, նրանք անգին երեխայք են, պատասխանեց տանտիլինը, դառնալով դէպի բժիշկը, — Աստուած օրհնում է այդ որբերի իւրաքանչիւր քայլը:

— Միթէ նրանք որբ են, հարցրեց հիւրը:

— Համարեամ թէ որբ են: Նրանց հայրը թէ և կենդանի է, բայց ամեն տարի ամբողջ գարունքուանից սկսած մինչև ձմեռ տանը չէ մնում. — իսկ մայրը, որ մի շատ և շատ բարի կին էր—մեռաւ: Նա, ողորմած հոգին, սիրելի էր ամենին, չկար մի մարդ, որ չ'սիրէր նրան, որպէս քոյզ, որպէս մայր: Ամբողջ գիւղը սուդու շիվանի մէջ թողեց: Փառք Աստուծոյ, որ զոնէ նրան, իբրև բարի յիշասակ՝ մնացին ազգպիսի երեխաներ, որոնք մեր սաներն են:

— Բայց ասացէք խնդրեմ, վաղուց է կուրացած փոքրը, հարցրեց բժիշկը:

— Դեռ մօր կենդանութեան ժամանակ. թէ ինչ պատահեց նրա աչքերին, ոչ ոք չ'գիտէ, և այդ Աստուած էր, որ առաջնորդեց ձեզ մեզ մօտ, ասաց տանտիլինը, — ամուսինս ինձ յացանեց, որ զուք բժիշկ էք, ախ, եթէ դուք նացէիք...

— Հէնց ինքս էլ այդ էի մտածում, տիկին, և կ'համարէի մեծ բաղդաւորութիւն, եթէ կարողանայի օգնել այդ թշուառ երեխային:

Միւս օրը շատ կանուխ կանգած էր ուսուցչի դրան առջև փոստային կառավարիչը և հարցնում էր, թէ չ' հրամացի պարոն բժիշկը լծել կառքը—ձիաները պատրաստեն:

Բժիշկը պատրաստ էր ճանապարհ ընկնելու, բայց նախ քան այդ՝ խնդրեց տեսնել երկու եղբայրներին: Երեխաները շատ ուրախացան, տեսնելով նախնթաղ օրուայ իրենց ուրախութիւն պատճառող պարոնին, և չ'հասկացան, թէ ինչու նա այնքան զովում էր նրանց՝ թղթէ ծրարը ուսուցչին յանձնելու համար:

Բժիշկը տեսաւ կոյր Գրիգորի աչքերը և համոզուեցաւ, որ այնքան վտանգաւոր չէ պատահած դժբաղդութիւնը, ինչպէս ինքը կարծում էր:

— Բոլորովին բժշկել, ՚ի հարիէ, չեմ կարող պնդել. — բայց խոսանում եմ, որ զործ կ'զնեմ բոլոր բժշկական միջոցները, որոնք ինձնից կլինեն կախուած: Երեք օրից յետոյ նրան քաղաք կ'ըերեք, և ինդրում եմ, որ անպատճառ ըերեք: Հարկաւոր է, որ մի քան օր մնայ ինձ մօտ:

Երեխաները և նրանց բարերարներն էլ չիմացան, թէ ինչպէս շնորհակալ լինեն — նրան օրհնանքներով ճանապարհ դրեցին:

Երեք օրից յետոյ ուսուցիչը Գրիգորին քաղաք տարաւ: Եղբայրները շատ լացեցին միմիանցից բաժանուելու ժամանակ, նախնաւանդ կարապեալ: Նա սրանց ուզում էր փոքր եղբօր աչքերի բժշկուիլը, բայց միենոյն ժա-

մանակ շատ էր վախենում, որ գուցէ չ'արժանանալ այսպիսի բազդի:

Ուսուցիչը վերադառնու, բերելով կարապեալ համար բժշկից զանազան լնծաներ և կարօտալի բարեւ:

— Մի ամսից յետոյ, ասայ նա, բժիշկը խոստացաւ տեղեկացնել հետևանքի մասին:

Մեծ եղբայրը չ'գիտէր, թէ ինչպէս ապրի մինչեւ Գրիգորի գալը: Գիշեր ցերեկ նրա մոտած մունքն այց էր:

Գանի ժամանակը մօտենում էր, այնքան անհանգիստ էր լինում կարապեալ: Ուսուցիչը և իւր կինը չ'գիտէին, թէ ինչպէս ցըռեն խեղճ երեխացի գարզերը. Ոչ մի թանգազին ընծայ չէր հեռացնում կարապեալց նրա մոտած մունքները: Միշտ, երբ նա երեկոյեանները վերադառնում էր՝ զնում էր իջևանը հարցնելու — տեղեկութիւն ստանալու:


Մի անգամ, երեկոյեան պահուն, ուսուցիչը, կինը և կարապեալ զբօսնելով՝ հասան փոստացին ճանապարհը: Յանկարծ հեռուից լսելի եղաւ զանգակի զօղանջիւն: Կարապեալ սիրաը ժութուում էր: Ի՞նչ կ'լինէր նրա ճարը, եթէ որ էլի խարուէր, սակայն չէ — երեկոյաւ նրան ծանօթ կառքը, որը հետզհետէ մօտենում էր... ահա կանգ առաւ, — և

ահա...իջաւ բժիշկը, իսկ Գրիգորը տեսնելով
Կարապետին՝ ճշաց ուրախութիւնից և թռաւ,
տեսաւ իր մեծ եղբօրը, այն, տեսաւ. Նրա
աչքերը բացուել էին:

Երկու եղբայր տեսան իրար և հեկեկալով՝
փաթաթուեցին իրար վզով։ Նրանց բարերար-
ները նոյնպէս լացեցին. — բժիշկն էլ չկարողա-
ցաւ զսպել իրեն։ Կարապետը չիմացաւ թէ էլ
ինչ անի. թողեց եղբօրը և ընկաւ նրա բա-
րերարի ոտքերը, բայց բարի բժիշկը չէր ու-
զում անդամ լսել նրա օրհնութիւնները,
ասում էր, որ ոչ թէ պէտք է իրենից շնորհա-
կալ լինեն՝ այլ Աստուածանից, առանց որի օդ-
նութեան ինքն ոչինչ չէր կարող շինել։

Նա երկու օր մնաց նրանց մօտ հիւր, և
այդ օրուանից, երբ անցնում էր այդ գիւղով,
չէր կարողանում չացելել ուսումնարանը և
չտեսնել Կարապետին և Գրիգորին։





ՅՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

Սիրոյ—Պօէզիա;
 Զբոցցներ բ. տեսր:
 Ուր սէրն է, այնտեղ է և Աստուած—
 Տօլմաօյի:
 Անօրէնութիւնը մի օր կը պարզ մի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Շաբուհակ լուս կը տեսնեն մանկական - աշա-
 կերտական և յաղովրդական ընթերցանութեան հա-
 մար օգտաւէտ և հանրամատչնլի գներով գրքեր:

Գաւառական զրավաճառներին կ'ուզարկուի
 (валож. платежемъ) 20% զիչումով: Բայց եթէ պա-
 հանջի զումարը անցնի չին գ բուրլուց, — այն ժա-
 մանակ ճանապարհածախսը մեզ վերաէ է:

Յանձն ենք առնում նպաստել այն անձանց,
 որոնք կ'ունենան ալղ բովանդակութեամբ նիւթեր—
 սպազրելու:

ՄՌ Հասցէն՝ Տիֆլիս. Կոյշա торговля
 Խидисելի, յանձնել Ա. Տէր-Սիմոնեանցին:

0004038

2013



ՀՀ Ազգային գրադարան

NL0004038

